

ԿԱՐՈՏԸ ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Նոնա Դավթյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Արցախ

Անտառագիտ

Բ. Նուրիկյանը սփյուռքահայ այն արձակագիրներից է, ովքեր փորձեցին գրչով փրկել կորցրած բնաշխարհի պատկերները: Իր բոլոր պատումնաշարերում գրողը պարզ, բայց և ինքնօրինակ ոճով կորագծում է հայրենի գյուղն ու նրա ստեղծարար բնակչին, ինչպես նաև նկարագրում, թե ինչպես Եղեռնից հետո Ամերիկայում ոչ իր կամքով հայտնված հայր ստիպված սեփականում է տեղի բարքերը, լեզուն, նահանջում ազգային ակունքներից:

Բանայի բառեր՝ կարոտ, կորուսյալ բնաշխարհ, ազգային սովորույթներ, կենցաղ, տարեգրություն, ուժացում, հայրենի գյուղ, օտար հորիզոններ:

Սփյուռքահայ գրականությունը, ինչպես հայտնի է, հիմնականում ձևավորվեց 1920-1930-ական թթ. նշանակալից ու բեղմնավոր մի տասնամյակ, երբ մղձավանջ ապրած տարագիր սերունդը սկսեց կայունաճ եվրոպական, ամերիկյան տարաբնույթ գաղթօջախներում, մերձավորարևելյան երկրներում, դիմագիծ դրսևորել, վերստեղծել գրամշակութային ավանդույթներ: Այն հանդես եկավ գրական շարժումներ հիշեցնող ուրվագծումներով (Կարոտ, Նահանջ, առարկաների սիմվոլիկ նշանների գերակա յուրացումներ, գերիրապաշտ, անգամ՝ բերգունական եվրոպական ազդեցության սուր հակվածություն), արդյունավոր որոնումներով, հույսի և հուսալքության փոխնիփոխ բացահայտումներով: Բոլոր ժամանակներում ազգային-հոգևոր հիշողությունը լավագույնս արթուն է մնում գրականության մեջ: Այլ կերպ չի էլ կարող լինել: Սփյուռքահայ գրականությունը միշտ առաջին գծի վրա, ավանդույթի կողքին, պահպանում է ցավի ու կարոտի ծնունդ հուշը, երևակայությունը, ընդվզելու ազնիվ մղումը: Հիրավի, նա երբեմն օտար բարքերին ներծծվելու պատրաստ հայն է, ազգային արժեքներից նահանջող անհատ, երբեմն էլ կարող է անակնկալ կերպով պայքարի ելած հախուռն առաջամարտիկի հովեր առնել:

Կարոտի երգիչների հիմնական թիրախը կորուսյալ եզերքի պատկերների սրբագործումի անաղարտ վերակազմումն էր: Ցավից ծնված կարոտը վերադարձնում էր հին հիշատակները, բնաշխարհի կորցրած արձակագիրների քնարական ու երևակայական գունեղանքները: Կորուստների անընդմեջ ցավ-կարոտ-նահանջ. ահա այն կորագիծը, որն ուղղություն էր տալիս սփյուռքահայ բորբոք գրականությանը: Մնացորդաց և համալրվող սերնդից մինչև նորերը լծվեցին գրականությամբ անցյալը իրական ներկային զոդելու հանձնառությանը: Նրանք փորձեցին կյանք ու շունչ տալ, փրկել անցյալի գյուղի, մարդկանց ուրվագծվող հիշատակները, ովքեր տերերն էին իրենց երկրի և արդար քրտինքով շենացնում ու ծաղկուն էին դարձնում այն, բայց յաթաղանի ուժով պոկվեցին արմատներից և նետվեցին անհյուրընկալ անապատներ: Մահվան խորշակից փրկված հայր գրականությունն բերեց իր և իրեն շրջապատող մարդկանց՝

ողբերգություններով լի կյանքի տարեգրությունը: Հուշագրությունը դարձավ Սփյուռքում ստեղծվող գրականության, առանձնապես արձակ երկերում երևան եկած տրոփյունը:

Կարոտի գրականության ամերիկահայ տրոփներում առաջնորդի անվիճելի տեղ նվաճեց Համաստեղը՝ «Գիւղը», «Անձրեւ» պատմվածաշարերով, վեպ-էպոպեա հիշեցնող «Մայիտակ ձիաւորը» աղմկահարույց երկհատոր ասքով: Իրենց ստեղծագործական նվաճումներով առանձնացան Վահե Հայկը, Արամ Հայկազը, Հակոբ Սաստուրյանը, Բենիամին Նուրիկյանը և ուրիշներ: 1920-40-ական թթ. նրանք տիրապետող հուզական եռուզեռ ստեղծեցին և քայլ առ քայլ մոտեցրին ու շոշափելի դարձրին մշուշի մեջ կարծես թե անդարձ կորսված հայրենիքը՝ Արևմտյան Հայաստանը:

Բենիամին Նուրիկյանը նույնպես ուրվագծեց անցյալը՝ հայրենի տան կարոտի կրակը բորբոք պահելու, վերադարձի, պահանջատիրության հույսով սերունդներին զինավառելու փափագ ունեցողի նվիրումով: Ապագա արձակագիրը Խարբերդի Հյուսենիկ գյուղից էր, ծնվել է 1897-ին: Նախնական գիտելիքները ստացել է գյուղի ծխական դպրոցում, ապա շարունակել ուսումը գավառի Կեդրոնական վարժարանում՝ աշակերտելով Թլկատինցուն (Հովհաննես Հարությունյան), ով չնայած գիտեր, որ «Դպրոցին գետնին վրա ուսուցիչը գրագետը կը սպաննէ...», բայց և խանդավառ նվիրումով ստեղծագործելու գաղտնիքներն էր բացահայտում, ուղղորդում իր սաներին զգուշանալ «ավելորդ, ծանր բառերե, մանավանդ անպետ ածականներե, որոնք նախադասությունը կը բեռնավորեն և գրության մը շինվածքն ու միտքը կը խախտեն, նույնիսկ կը փլցնեն ալ» [1; 217], խրատում էր սեփական ոճը աճեցնել՝ «...պայմանավ որ պարզության ցանկապատեն» երբեք դուրս չգան. «Մի՛ մոռնաք գավառին աղն ու պղպեղը խառնել ձեր գրվածքին, և այնպես գրել, որ կարդացողը համ առնէ...» [1; 217]:

Բ. Նուրիկյանը հետևեց ուսուցչի խորհուրդներին թե՛ որպես «Նոր գիր» հանդեսի աշխատակից, թե՛ խմբագիր, հետագայում նաև արձակ պատումների հեղինակ: 1913-ին Բ. Նուրիկյանը մեկնում է Ամերիկա, դպրոցն ավարտելուց հետո շարունակում ուսումը Կոլումբիայի համալսարանի գրականության բաժնում, որն ավարտում է 1920-ին՝ «Պսակավոր արվեստից» տիտղոսով, իսկ մեկ տարի հետո ստանում «Մագիստրոս արվեստից» կոչումը: Առաջին արձակ պատումները երևում են իր խմբագրած «Նոր գիր»-ի էջերում, ապա 1937-ին առանձին գրքով հրատարակում է «Այգեկութք»-ը, 1958-ին՝ «Պանդուխտ հոգիներ»-ը, իսկ 1978-ին՝ «Կարոտ հայրենի» գրքերը՝ ստեղծագործական պարզ, անմիջական, մեկ-երկու էջի մեջ դնելով «աղն ու պղպեղը» գավառի, խուսափելով «ածականներու դեզին չարիքեն», ինչպես խրատել էր ուսուցչապետը՝ Թլկատինցին:

«Նուրիկեան ինքնուրոյն է, անոյշ ոճով մը որ արեւին տակ հասունցած պտուղներու համն ունի: Պարզ ըլլալու առաքինութիւնը միակ շնորհը չէ իր լեզուին: Հակառակ իր համեստ ու անպաճոյճ տարագին՝ իր գրականութիւնը լեցուն է ըզմայլելի խորհուրդներով ու գիւտերով: Նուրիկեան գիտէ իր ընթերցողները առաջնորդել անկոխ ճամբաներէ ու զանոնք դնել անակնկալներու առջև» [3; 4],- գրչընկերոջ տաղանդի ուժն այդ օրերին նկատում է Հակոբ Գույումճյանը:

Բ. Նուրիկյանը ստեղծեց իր գույների ու մեղեդիների աշխարհը, հյուսեց Խարբերդի Հյուսենիկ գյուղի կյանքի գունեղ հեքիաթը, կյանքից, մանկությունից ստացած սոսկալորությունների պատկերները թղթին հանձնեց, որովհետև «Գրականութիւնը իրեն համար արտայայտութեան ինքնապատակ միջոց մը չէ, այլ ճիգ մը՝ «մեր ժողովրդին ու մարդկութեան բարիքին համար» [3; 4]:

Ահա իր գյուղը, ուր «Արեգակը իր հասած դդումը կը կախե երկինքեն», աղբյուրները՝ Յոթնակը, «յոթ կաթնտու ստինքներու նման և կաթի չափ համով», Տևե տամին, որ «տարին տասներկու ամիս լեռան սրտեն կը քամվեր ու կը հոսեր անընդհատ, օր մը տկար ու լալկան, օր մը ուժգին և զվարթ», կհոսեր «գյուղացիին համբերանքին պես անսպառ...» [1;95-96], քարայրը՝ Աբեղկան տնակը, նկարագրեց ձայները գյուղի՝ թթենու նվազը, թռչունների դայլայլը, տերևների փսփսուքը և հովը, որ անտեսանելի լարերի վրա անանուն երաժշտության կտորներ էր տարածում օդում, առուն, որ իր հատակին «սև ու ձերմակ խիճերու շարժուն ստեղնաշար մը ունի», ուր անտեսանելի մատներ բնության թովչապարար մեղեդին են նվագում, և երգից ծնվում է մտածումը, թե «...վարպե՛տ մը կա, բարի և իմաստուն վարպետ մը անպատճառ, որ միննույն շնորհը բաշխեր է անխտիր՝ բանաստեղծին, թռչունին, տերևին, հովին, վագող ջուրին, երգող մշակին ու միջատին, և զանոնք լուսեղեն ցանցով մը իրարու կապեր է միննույն արևին ու միննույն երկինքին տակ» [1; 66]:

Էջ առ էջ հյուսվում են գյուղի «անգիր պատմության» (Բ. Նուրիկյանի) դրվագները, և հեղինակը վարպետ գրչով նույնիսկ մեկ-երկու էջի մեջ կարողանում է տեղավորել ամբողջ գյուղի դաշտանկարը, հնավանդ բարքերը, Զատկի, Կաղանդի տոնական օրերին հայ սեղանին դրված անուշեղենների առատությունը և գյուղի շուկան, որ առանձին շուք է տալիս գյուղանկարին, որտեղ վաճառելու համար բերք ու բարիք էին հասցնում նաև հարևան գյուղերի բնակիչները. «Կայսերիկը իր բանջարեղենը, մանավանդ գրկաչափ կաղամը կը բերեր ծախու կը հաներ հոն: Մորենիկը իր կծու բողկն ու շաքարի չափ քաղցր ճակնդեղը, Փերչենձը՝ իր մեղրահամ ձմերուկն ու անկուտ թուփը, Բագենիկը՝ իր պատվական կեռասն ու խաղողը, Բալուն՝ իր անտառներուն փայտն ու իր փեթակներուն մեղրը, հեռավոր Քարերն ու Պինկյուր՝ իրենց գիրուկ ոչխարն ու այծը, Ծովքը՝ իր ձուկն ու խտուտը, Խոխն ու Հավուկը՝ իրենց անմահական գինին և ինքը՝ մեր գյուղը՝ ամեն բերք ու բարիք, որ կը քաղեր դաշտեն ու այգեստանեն» [1; 102]: Գյուղանունների, հայրենի լեռների, կենցաղի նկարագրություններով Բենիամին Նուրիկյանն ազգագրությանը մեծ ու արժեքավոր նյութ է տրամադրում:

«Գյուղանկար», «Հայրենի կաղանդ», «Մեր շուկան», «Մայրը» պատմվածքներում Նուրիկյանը, ապավինելով վերհուշին, «անցյալի խորունկ հոր»-ից դուրս է հանում հին գյուղի միօրինակ կյանքի տարիները, որոնք «կրիայի հարատև սողունով մը կուգային», և գյուղացիների պես հեղինակն էլ քունքերն է քերում՝ ասես «մոռացված դեմք մը հիշելու ճիգով»: Անցյալի ստվերներից հառնում են «մտքի խոնարհ մշակ» վարժապետի՝ Բռիկյանի, գյուղի փեսա Գոգոյի, Մելքոն աղբոր, Խենթ Սարգսի կերպարները, ամբողջ հասակով կանգնում է մոր կերպարը, ով «աղոթքի վերջին փշուրը դեռ բերանը» բանում էր անընդհատ, ողբում զավակների պանդխտության համար, ահա հայրը, նա ամեն մեռելոցի որդուն 1895-ի համիդյան ջարդերին զոհ գնացած պապի գերեզմանն էր տանում: Տարիներ են անցնում, նույն մեռելոցի օրն է, հեղինակի «մտրակված կարոտը» հին օրերին է վերադառնում. «Ըսե՛, հա՛յր, բահս ու՛ր զարնեմ այս անգամ, և ու՛ր տնկեմ թութի մատղաշ չթիլ մը, որուն շուքը քու և մորս մասունքին վրա իյնա» [1; 71]:

Չկա այլևս իր գյուղը, նրանք այլևս պանդուխտ հոգիներ են, նախ չքավորությունը երկրում, որ «իշու պոչ է, ոչ կերկննա, ոչ ալ կը կարճանա», պարտադրում էր երիտասարդներին հեռանալ գյուղից՝ Ամերիկայում բախտ որոնելու հեռանկարով, ապա վրա հասած աղետը՝ ջարդը դատարկում են գյուղը իրական տերերից: Եվ Նուրիկյանը վրձնում է «անտուն, անտիրական ցեղի մը մանրանկար ողբերգությունը», ոմանք իրենց մահը գտան արքայի ճանապարհներին, իսկ մի մասն էլ «Օտար հողի վրա արմատ բռներ նստել են ա՛լ» [1; 154]:

Ցավալիորեն ծանրանում է գաղափարական շեշտված հարցադրումը. ինչ է սպասվում հայրենիք կորցրած մարդուն Ամերիկայում: Որպես պատասխան հեղինակը նկատում է, որ Ամերիկա «նետվող բոլոր ցեղերը, հին աշխարհի գաղթական զավակներ ամենքն ալ, փսոր-փսոր կըլլան, կը շաղվին միննույն լորձունքով ու ախորժակով, և կերթան բջիջ առ բջիջ հյուսել միսն ու ոսկորը վաղվան Ամերիկային» [1; 156]:

Ցուրտ, հայ «գեղի մարդուն» խորթ են իրեն պարտադրված երկինքը, բարքերը: Շատերը փորձում են պահպանել հին, ազգային սովորույթները, բայց ապարդյուն. քայլ առ քայլ, գիտակցելով հանդերձ նրանք նետվում են ուժացման խորխորատները, որովհետև դա էր պարտադրում որդեգրած երկիրը: Հնակարկատ Մերկեր ամուն այլևս ամերիկացի է, առաջին իսկ օրից փոխեց տարազը, բայց «երբ կարգը անունին ու մականունին հասավ՝ չհամարձակեցավ ձեռք վերցնել անոնց դեմ»- նուրբ ու ներողամիտ երգիծում է հեղինակը: Ու երբ Մերկերիոս Մահտեսի Մանուկյանին հորդորում են կարճ ստորագրել Մերկեր, վերջինս բարկացած պատասխանում է. «Չըլլա՛ր, ծո՛, չըլլա՛ր, մենձերուս, մեռելներուս հիշատակը չեմ կրնար կոտրել» [1; 189]:

Հնակարկատն անքուն գիշերներ է լուսացնում իր անունն ու ազգանունը անգլերեն գրել սովորելու համար: Քննիչ պաշտոնյան քարացած զարմանքով նայում է գրությանը և ժպտալով ասում. «Անունդ Արարատին չափ խոշոր է, կուզե՞ս փոխել կամ կարճացնել», հնակարկատը պատասխանում է. «Չէ՛, պարոն, չէ՛, ըսի, մեղք է, խնդրեմ, անունիս մկրատ մի՛ դպցնեք. Արարատին ձեռք մի՛ զարնեք» [1; 190]:

Արարատը շարունակում է հեռավոր երազի պես հետևել, առաջնորդել հայ մարդուն աշխարհի ամենահեռու ծայրակետում անգամ, և նուրբ վրձնահարվածներով Նուրիկյանն ամբողջացնում է նախ մինչեղեռնյան գյուղը, ապա նաև նկարագրում այլևս ամերիկացի հայի ճակատագիրը, «կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ» (Շ. Շահնուր) նահանջը ազգայինից, ինքնությունից: Ճիշտ է այս առումով նկատել հայրենի գրականագետ Վազգեն Գաբրիելյանը. «Եթե Համաստեղը հայրենի գյուղաշխարհը կենդանացրեց մարդկային բնավորությունների հոգեբանական նուրբ վերլուծումներով՝ կենցաղը պատկերելով որպես օժանդակող պայման ու համապատկեր, ապա Նուրիկյանը ձգտեց համապատկերի ամբողջացմանը՝ չմոռանալով երբեմն նաև հոգեբանական կողմը» [2; 76]:

Այստեղ է նաև Նուրիկյանի հաջողությունը:

Եթե ընդհանրացնելու լինենք, կարող ենք արձանագրել, որ «կապույտ թռչունին» հետամուտ գրողների՝ Համաստեղի, Նուրիկյանի, Արամ Հայկազի, Մնձուրու, Վահե Հայկի և ուրիշների պատումների շնորհիվ մենք այսօր գաղափար ենք կազմում մինչեղեռնյան հայ գյուղի ու նրա առօրյայի մասին: Չկան այլևս նրա բնակիչները, բայց տարեգրության էջերից մեր առջև պարզվում է կորուսյալ բնաշխարհը, այդ բնաշխարհի մարդկանց դիմագրաված դժվարություններն օտար ու անհյուրընկալ հորիզոններում, և որ ամենից կարևորն է՝ գեղարվեստական ուժով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Նուրիկյան Բ.**, Պանդուխտ հոգիներ, -Հայպետհրատ, Երևան-1958,229 - էջ:
2. **Գաբրիելյան Վ.**, Մփյուռքահայ գրականություն /Երրորդ լրամշակված հրատարակություն, - Երևան, -ԵՊՀ հրատ., -2016, -424 էջ:

3. «ԱՐԵՒ». Ազգային շափերու օրկան/ Կահիրէ, 1949, -ԼԵ. Տարի, -թ. 9327, Օգոստոս 20: Գոլյումճեան Յակոբ- «Բենիամին Նուրիկեան եւ հայ գրականութիւնը»:

РЕЗЮМЕ

Тоска в прозе Бениамина Нуриkyяна Нона Давтян

Ключевые слова: тоска, утраченная природа, национальные обычаи, быт, летопись, ассимиляция, родное село, чужие горизонты

Б.Нуриkyян – один из тех прозаиков диаспоры, которые пером пытались спасти образы утраченной природы. В своих циклах рассказов писатель, простым, но в то же время оригинальным языком, рисует образ родного села и созидательного жителя. Он также описывает как армянин, после Геноцида оказавшийся не по своей воле в Америке, вынужден перенять их нравы, язык и отойти от своих истоков.

SUMMARY

The longing theme in Beniamin Nurikian's prose Nona Davtyan

Key words: longing, lost nature, national customs, life, chronicle, assimilation, native village, foreign horizons

B. Norician is one of those writers of the Diaspora who tried to save the images of lost nature by means of a pen. In his cycles of short stories the writer, in a simple, but at the same time original language, draws the image of his native village and creative inhabitant. He also describes how an Armenian who, after the Genocide, found himself in America against his will, is forced to adopt their customs, language and move away from his origins.